

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև բարեկամության ու համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ղազախստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Բարձր պայմանավորվող կողմեր, հիմնվելով իրենց ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի և փոխադարձ հարգանքի ավանդույթների վրա,

համարելով, որ իրենց միջև փոխշահավետ համագործակցության անշեղ զարգացումը և ամրապնդումը համապատասխանում են երկու պետությունների ժողովուրդների շահերին,

հասկանալով, որ երկու պետությունների պատմական ճակատագրերը ու բարեկեցությունը անխզելիորեն կապված են ինչպես եվրասիական տարածքում, այնպես էլ ամբողջ աշխարհում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդման հետ,

ձգտելով համագործակցել Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում և վճռականությամբ լեցուն լինելով ԱՊՀ շրջանակներում երկու պետությունների կողմից ստորագրված փաստաթղթերի գործնական իրականացման հարցում,

ցանկանալով զարգացնել և խորացնել հարաբերությունները քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում,

հաստատելով իրենց հավատարմությունը միջազգային իրավունքի հանրաձանաչ նորմերը և սկզբունքները պահպանելուն,

ճանաչելով միջազգային կազմակերպություններում և տարածաշրջանային ծրագրերում երկու պետությունների սերտ համագործակցության կարևորությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Բարձր պայմանավորվող կողմերը հիմնում են իրենց հարաբերությունները փոխադարձ հարգանքի, վստահության և համաձայնության վրա՝ ընդ որում ղեկավարվելով ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի հիմնարար սկզբունքներով, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաձանաչ նորմերով:

Հոդված 2

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ մյուս Բարձր պայմանավորվող կողմի ինքնիշխանության, անկախության ու տարածքային ամբողջականության դեմ ուղղված որևէ գործողություններին կամ միջոցառումներին, ինչպես նաև միություններին և դաշինքներին մասնակցությունից և թույլ չտալ, որ իրենց տարածքները օգտագործվեն ագրեսիայի կամ այլ բռնի գործողությունների համար՝ ընդդեմ մյուս Բարձր պայմանավորվող կողմի:

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը արգելում և կասեցնում է իր տարածքում այնպիսի կազմակերպությունների ու խմբերի ստեղծումը և գործունեությունը, ինչպես նաև առանձին անձանց գործունեությունը, որոնք ուղղված են ընդդեմ մյուս Բարձր պայմանավորվող կողմի պետական ինքնիշխանությանը, անկախությանը ու տարածքային ամբողջականությանը:

Ընդ որում Բարձր պայմանավորվող կողմերը կանցկացնեն համատեղ խորհրդակցություններ Անկախ պետությունների համագործակցության տարածքում անվտանգության հարցերով:

Հոդված 3

Ինքնուրույն լուծելով ազգային անվտանգության և ռազմական շինարարության ապահովման խնդիրները՝ Բարձր պայմանավորվող կողմերը կիրականացնեն սերտ համագործակցություն այդ բնագավառներում և կորոշեն փոխգործակցության ձևերը սույն Պայմանագրի և այլ համապատասխան համաձայնագրերի հիման վրա:

Բարձր պայմանավորվող կողմերը աշխարհատնտեսական հարաբերությունների համակարգում իրենց նպատակաուղղված ներգրավման նպատակով տարբեր մակարդակներով կանցկացնեն խորհրդակցություններ միջազգային, տարածաշրջանային անվտանգության և տնտեսական կոոպերացիայի՝ իրենց հետաքրքրող հարցերով:

Հոդված 4

Բարձր պայմանավորվող կողմերը կհամագործակցեն իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումներում, այդ թվում՝ կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, միջազգային ահաբեկչության, անօրինական ֆինանսական գործառնությունների,

թմրամիջոցների, հոգեներգործող, ռադիոակտիվ, պայթուցիկ նյութերի, թունաքիմիկատների, սպառազինությունների ապօրինի շրջանառության, տրանսպորտի բոլոր տեսակների երթևեկության անվտանգության դեմ ուղղված գործողությունների, մաքսանենգության, մշակութային արժեքների անօրինական արտահանման դեմ:

Բարձր պայմանավորվող կողմերը կիրականացնեն այդ բնագավառներում փորձի և օպերատիվ տեղեկության փոխանակում, կանցկացնեն դրա հետ կապված համատեղ միջոցառումներ միջազգային համագործակցության շրջանակներում:

Հոդված 5

Բարձր պայմանավորվող կողմերը կապահովեն իրենց տարածքում բնակվող մյուս Բարձր Պայմանավորվող կողմի քաղաքացիների քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային իրավունքները և անձի հիմնարար ազատությունների իրականացումը՝ Բարձր պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան:

Հոդված 6

Բարձր պայմանավորվող կողմերը կգարգացնեն իրավահավասար և փոխշահավետ համագործակցություն քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական, մարդասիրական և այլ ոլորտներում:

Վերոհիշյալից բացի, առաջնային ուղղություններ կլինեն.

- Բարձր պայմանավորվող կողմերի շահերին չհակասող համագործակցությունը միջազգային կազմակերպություններում տարբեր նախաձեռնություններ իրականացնելիս,

- մարդու իրավունքի ապահովումը՝ հիմնարար միջազգային փաստաթղթերին համապատասխան,

- երկու պետություններում կայունության, խաղաղության և քաղաքացիական համաձայնության ամրապնդման կարևորագույն գործոն հանդիսացող ժողովրդավարական վերափոխումների հետևողական իրականացումը,

- շրջակա միջավայրի պահպանությունը,

- կազմակերպված հանցավորության, ահաբեկչության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը:

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն և կխորացնեն համագործակցությունը այդ բնագավառներում՝ երկկողմ ու բազմակողմ միջազգային փաստաթղթերի հիման վրա:

Հոդված 7

Բարձր պայմանավորվող կողմերը կաջակցեն իրենց միջև խորհրդարանական կապերի հետագա ընդլայնմանը:

Հոդված 8

Բարձր պայմանավորվող կողմերը, կարևոր նշանակություն տալով ազգային տնտեսությունների ներուժի կայուն զարգացմանն ու արդյունավետ օգտագործմանը, կնպաստեն երկու պետությունների միջև տնտեսական ինտեգրացիայի խորացմանը:

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ձեռնպահ կմնա մյուս Բարձր պայմանավորվող կողմին տնտեսական վնաս պատճառելու ընդունակ գործողություններից:

Հոդված 9

Բարձր պայմանավորվող կողմերը կաջակցեն իրենց տարածքում մյուս Բարձր պայմանավորվող կողմի ձեռնարկությունների, կազմակերպությունների ու ձեռներեցների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, այդ թվում՝ արտադրական կոոպերացիայի, ուղղակի ներդրումների և դրանց պաշտպանության բնագավառում, կնպաստեն համատեղ անդրազգային միավորումների կազմակերպմանն ու գործունեությանը, ինչպես նաև համագործակցության այլ ձևերին:

Հոդված 10

Բարձր պայմանավորվող կողմերը կընդլայնեն համագործակցությունը տրանսպորտի ու կապի, հեռուստահաղորդակցության և ռադիոհաղորդակցության, ինֆորմատիկայի ազգային համակարգերի զարգացման հարցում՝ նպաստելով այդ բնագավառներում ձևավորված համալիրների և միասնական համակարգերի պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը:

Երկաթուղային, օդային, ավտոմոբիլային տրանսպորտով բեռների ու ուղևորների փոխադրումները երկու պետությունների միջև, ինչպես նաև տարանցումը պետությունների տարածքներով, այդ թվում՝ համապատասխան ենթակառուցվածքի օգտագործմամբ, իրականացվում է առանձին համաձայնագրերով սահմանված կարգով:

Բարձր պայմանավորվող կողմերը կձեռնարկեն համապատասխան միջոցներ միմյանց տարածքներով տրանսպորտային փոխադրումների ժամանակ երթևեկության, ուղևորների և փոխադրողների անվտանգությունը, բեռների և տրանսպորտային միջոցների պահպանությունը ապահովելու համար:

Բարձր պայմանավորվող կողմերը կհամաձայնեցնեն իրենց գործողությունները TRACECA և INOGATE ծրագրերի շրջանակներում համագործակցություն իրականացնելու ընթացքում:

Հոդված 11

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը կրթության, առողջապահության, գիտության և տեխնիկայի, գիտատեխնիկական տեղեկության փոխանակման բնագավառում, ինչպես նաև համագործակցությունը մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության բնագավառում՝ հաշվի առնելով իրենց միջազգային պարտավորությունները, խրախուսելով ուղղակի կապերը ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների միջև, կիրականացնեն համատեղ ծրագրեր և մշակումներ հատկապես առաջավոր տեխնոլոգիաների բնագավառում:

Բարձր պայմանավորվող կողմերը կփոխգործակցեն գիտական և մանկավարժական կադրերի պատրաստման ոլորտում, ինչպես նաև կխրախուսեն գիտնականների, դասախոսների, ստաժորների, ասպիրանտների և ուսանողների փոխանակումը:

Հոդված 12

Բարձր պայմանավորվող կողմերը համակողմանիորեն կաջակցեն համագործակցության հետագա զարգացմանը մշակույթի տարբեր բնագավառներում, կնպաստեն գործնական կապերի ընդլայնմանը ստեղծագործական միությունների և միավորումների, մշակութային հաստատությունների, գրականության, արվեստի, զբոսաշրջության ու սպորտի գործիչների միջև և այդ բնագավառներում կադրերի պատրաստմանը:

Հոդված 13

Բարձր պայմանավորվող կողմերը կիրականացնեն համագործակցություն շրջակա միջավայրի պահպանության, ռեսուրսներ խնայող բնօգտագործման, էկոլոգիապես մաքուր արտադրությունների ոլորտի ընդլայնման բնագավառում:

Բարձր պայմանավորվող կողմերը կհամագործակցեն այդ բնագավառում տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով՝ ձգտելով բնապահպանական անվտանգության համապարփակ միջազգային համակարգի ստեղծմանը և փոխադարձ օգնություն կցուցաբերեն միմյանց բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ ծագելու դեպքում:

Հոդված 14

Սույն Պայմանագրի դրույթները չեն շոշափում միջազգային այլ պայմանագրերից և համաձայնագրերից բխող Բարձր պայմանավորվող կողմերի իրավունքները ու պարտավորությունները, որոնց մասնակիցներ են հանդիսանում նրանք:

Հոդված 15

Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ տարաձայնությունները Բարձր պայմանավորվող կողմերի միջև ենթակա են լուծման խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 16

Բարձր պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Հոդված 17

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրվանից:

Հոդված 18

Սույն Պայմանագիրը կնքվում է տասը տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի, յուրաքանչյուր անգամ՝ հաջորդ հնգամյա ժամանակաշրջանների համար, եթե Բարձր պայմանավորվող կողմերից ոչ մեկը Պայմանագրի գործողության համապատասխան ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ մյուս Բարձր պայմանավորվող կողմին գրավոր չհայտնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աստանա քաղաքում 1999 թվականի սեպտեմբերի 2-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս տարածայնություններ առաջանալու դեպքում Բարձր պայմանավորվող կողմերը կղեկավարվեն ռուսերեն տեքստով:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մայիսի 23-ից: